նաւամատոյցի բաժնետիրական ընկերութեան...

Գրեթէ ամբողջ Եւրոպայում թրքասէր տիպերը նման են իրար. իդէականութիւնից զուրկ եւ չահագիտական ատտառով ճոխացած:

Դրա հակառակ ամէն մի հայասէր անպայման մաքուր նկարագրի տէր իդիալիստ է: Հին առած է՝ «Ասա՛, ո՞վ է բարեկամդ, կ'ասեմ, ո՞վ ես դու». խղճմտանքի ու հոգու փերեզակներից դուրս՝ կան բազմաթիւ պարկեշտ, ազատախոհ մարդիկ, որոնք առնուազն չփոթուած են քեմալիզմի քաղաքակրթական փայլփլուն bluff-ով: Ոմանց յափշտակել է Անդորայի վարիչների յանդգնութիւնը կտրել հին, կրօնապետական ըմբռնումների ու հաստատութիւնների հետ. ուրիշներին գրաւել է Սաքարիայի յաղթանակը. շատ են եւ նրանք, բարեմիտ մարդիկ, որոնք բարեխղճութիւն են համարում դէթ սպասել ձեռնարկուած բեֆորմների ելքին եւ մինչեւ այդ բարւոք են համարում առնուազն համակիր լինել:

Նորերս զուիցերիական մի շատ պատուաւոր թերթի խմբագիր ճգնում էր ինձ համոզել, թէ «Թիւրքերը փոխուած են. նրանք է՛լ արիւնարբու չեն առաջուան պէս». ապա ուզեց իմ կարծիքն իմանալ, թէ հայ-թիւրք համերաշխութեան տեսակէտից լաւ չէ՞ր լինի արդեօք տեղական մամուլի անունից քանի մը թիւրք ներկայացուցիչներին պատուոյ ճաշի հրաւիրել: Իմ զարմանքի՞ ասեմ, թէ ապշութեան առջեւ մարդը գլուխը կորցրեց ու սկսեց երեխայի պէս թոթովել անկապ ու անիմաստ խօսքեր:

Զուիցերիացի օրագրողը տարաբախտաբար միակ չէ: Միամիտների ասեմ, թէ մոլորուածների մի բազմութիւն կայ, որ գիտակցաբար, թէ անգիտակցաբար որոշ համակրանք ունի դէպի քեմալիզմը, որ համարում է իդէական չարժում: Իսկական եւրոպացին, եթէ նա Արեւելքի գաղթավայրերում բրտացած եւ շառլատանացած չէ, երեխայի է նման, դիւրահաւան, բայց եւ բաց, ժպտուն առաքինութեամբ, որին կարող է խաբել առաջին իսկ պատահած թիւրքը իր մեղրածորան լեզուով, իր հաճոյակատար ձեւերով, իր արուեստակեալ bonhomie-ով:

Յետոյ քիչ չեն նրանք, որոնք Թիւրքիան ճանաչում են Պիեռ-Լոտիի վէպերով, կամ Madame Golis-ի ու Temps-ի Պոլսի քաղաքական թղթ. Ժան-Տիզօնի յօուածներով հեշտութեամբ ընկնում են մոլորութեան մէջ: Կայ եւ եւրոպական ամբոխը, աշխատաւոր մարդկանց, մանր խանութպանների, ծառայողների զորշ բազմութիւնը, որ ամէն օր վաղ առաւօտ գործի է շտապում եւ մետրոպոլիտէնի կամ տրամուայների մէջ շտապով աչքի է անցնում լուսաբացի թերթը, կարդում է լուրերը Արեւելքից, «Մուստաֆա Քեմալ յաղթական»...

«Թիւրք հանրապետութիւն»...

«Սուլթան գահընկէց ու վտարանդի. եւրոպական կարգ ու սարք. ֆէսերը՝ փոխած, կանայք — թիւրք կանայք — հարէմից դուրս ելած առանց քօղի, կարճ ժիւպերով, ու dausing-ներում օրօրուելիս տղամարդկանց հետ եւայլն, եւայլն»...

Բոլոր այս ընթերցումներից միշտ մի բան մնում է:

Այսպիսով կազմւում է մի հասարակաց կարծիք:

Եւ ինչպէս որ արեւի տակ ազնիւ տեսակի կենդանիների կողքին թունաւոր իժ ու զեռուն տեղ ունին, այդպէս էլ ամբոխների մշուշապատ մտածումների մէջ յաճախ արդարադոյն դատերի կողքին արտառոց ու վանիչ երեւոյթներ հովանաւոր ու ջատագով են գտնում: Աշխարհահռչակ ոճրագործ Լանդրիւի օրինակը հասարակական պսիխոզի մի չշմեցուցիչ փաստ է. երբ այս հրէշը—որ տասներկու կին էր դայթակղեցրել, ապա սպաննել ու վառել — Վերսայլում դատապարտուեց մահուան, շատ բարձր դասի կանայք — որոնք շարաթներով ներկայ էին դատավարութեան ամէն օր — վերջից ուշաթափուեցին: Լանդրիւն, մարդակերպ այդ գազանը վաստակել էր այս փափկասուն տիկնանց համակրանքը շնորհիւ իր պաշտպանութեան արտասովոր ճարպիկութեան:

Ինչո՞ւ զարմանալ, որ Սաքարիայից մինչեւ Զմիւռնիա յոյն բանակը հալածող և անդամ Դաշնակիցներին սպառնացող Թիւրքը որոշ համակրանքի զգացմունք է զարթեցրել միամիտ